«Վեոլիա Ջուր» Փակ Բաժնետիրական Ընկերություն
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

«18» հունվարի 2021 թվական քաղաք Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն 04 Լ

ՉԿՈՅՈՒՂԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 27-ի N ԿՍ/34.3-Մ4-6/3645-2020 գրության, գրությանը կից ներկայացված ՀՀ քաղաքաշինության կոմիտեի դիրքորոշման՝ կոյուղացված տարածքներում կոյուղագծերի կառուցման խնդիրների վերաբերյալ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 80-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերի IV գլխի 8-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն՝ իր հոլովաձևերով)՝ չկոյուղացված տարածքների հաշվառման և դրանցում ջրահեռացման համակարգի կառուցման կարգը՝ համաձայն Հավելվածի 1-ի և չկոյուղացված տարածքների ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:

2. Ընկերության Գլխավոր տնօրինության Հանրային կապերի բաժնի պետի տեղակալ Մուրադ Սարգսյանին՝

- ապահովել սույն հրամանի և կից հավելվածների հրապարակումը Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

3. Ընկերության Գլխավոր տնօրինության Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ Կարինե Դավթյանին՝

- սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել դրա պատշաճ ծանուցումը Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

4. Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

- իրենց ղեկավարված ստորաբաժանումների աշխատակիցներին ծանոթացնել սույն հրամանին և դրան կից հավելվածներին,

- իրենց իրավասության շրջանակներում ապահովել սույն հրամանի և դրան կից հավելվածների կիրառումը:

5. Սույն հրամանի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Ընկերության գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանին:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱՆՆԱ ՇԱՀԻՆՅԱՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
CLOSED JOINT STOCK COMPANY «VEOLIA DJUR»
02655115

Հավելված 1
«Վեոլիա Ջուր» փակ
բաժնետիրական ընկերության
գլխավոր տնօրենի
2021թ. հունվարի 18-ի թիվ 04 Լ հրամանի

ԿԱՐԳ

ՉԿՈՅՈՒՂԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգը /այսուհետ՝ Կարգ/ սահմանում է բնակավայրերի որոշ կառուցապատված տարածքներ որպես չկոյուղացված տարածք (այսուհետ՝ Տարածք) հաշվառելու, ինչպես նաև Տարածքում ջրահեռացման համակարգի կառուցման հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվառված Տարածքների ցանկը սահմանված է՝ համաձայն Հավելվածի 2-ի:

3. Սահմանել, որ բնակավայրերում որոշ կառուցապատված տարածքներ կարող են հաշվառվել որպես չկոյուղացված համեմատաբար մեծ հեռավորությունների և դժվարամատչելի պայմանների դեպքում:

4. Տարածքում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական պայմանը տրամադրելիս, հիմք ընդունելով տվյալ քաղաքաշինական միջավայրի առանձնահատկությունները, մատչելիությունը, կառուցապատման խտությունը, ինժեներաերկրաբանական պայմաններն ու ռելիեֆը, գնահատվում են առկա ջրահեռացման համակարգին միացման կամ կեղտաջրերի մաքրման տեղային սարքավորումներով ջրահեռացման համակարգերի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ջրահեռացման համակարգի կառուցման հետ կապված հարցերին կարող են տրվել իրավիճակային լուծումներ:

5. Ցանկում ներառված Տարածքում, Կարգի 4-րդ կետով նախատեսված տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա, Ընկերության կողմից ջրահեռացման համակարգի կառուցման համար տրամադրվելիք տեխնիկական պայմանում պետք է երկու հարկից ավելի բարձր բնակելի շենքերում, հյուրանոցներում, ծերանոցներում, հիվանդանոցներում և այլ բուժհիմնարկներում, առողջարաններում ու հանգստյան տներում, դպրոցներում ու նախադպրոցական հիմնարկներում, կինոթատրոններում ու մշակույթի այլ օբյեկտներում, հանրային սննդի օբյեկտներում, սպորտային կառույցներում, բաղնիքներում ու լվացքատներում

նախատեսել ներքին ջրամատակարարման և կեղտաջրերի մաքրման տեղային սարքավորումներով ջրահեռացման համակարգեր:

6. Կենտրոնացված կոյուղացանց չունեցող տարածքներում նոր կառուցվող օբյեկտների /բազմաբնակարան, հասարակական և արտադրական շենքեր և շինություններ/ համար կոյուղաջրերի տեղային կենսաբանական մաքրման կայանների պարտադիր տեղադրմանը ներկայացվող պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1142-Ն որոշմամբ:

7. Կարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

Հավելված 2
«Վեոլիա Ջուր» փակ
բաժնետիրական ընկերության
գլխավոր տնօրենի
2021թ. հունվարի 18-ի թիվ 04 Լ հրամանի

ՑԱՆԿ
ՉԿՈՅՈՒՂԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

1. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔ

Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջաններ - Կորեայի Զոր, Շրջանցիկ թունել, Քանաքեռ Գեսին հարակից նոր թաղամաս, Հրազդանի կիրճին հարակից տարածք, Այգեձորի որոշ հատված, Քանաքեռի այգիներ, Ֆանարջյան փողոցից մինչև Հասրաթյան 1 ընկած հատված

Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններ - Նազարբեկյան, Սիլիյան Գ-1 թաղամասեր, Սիլիկյան թաղամաս, Գ-1 Դավթաշեն գյուղ, Դավթաշեն 1, 2, Զոր 1, Զոր 2 թաղամասեր, Աշտարակի խճուղի, Սիլիկյան հին խճուղի

Ավան վարչական շրջան - Բագրևանդ թաղամաս, Շահինյան փողոցի վերջնամաս, Ալմա Աթայի փողոցին հարակից հատված, Սաֆարյան փողոց, Աղի հանքի այգեգործական հատված

Էրեբունի վարչական շրջան - Մուշական և Զրաշեն համայնքներ, Այվազովսկու փողոցից դեպի Արցախի պողատա, Նուբարաշենի Ա,Բ,Գ,Դ,Ե,Զ թաղամասեր

Կենտրոն վարչական շրջան - Կաշեգործների փողոցի ստորին հատված, Հրազդանի կիրճ, Թաիրովի փողոցի որոշ հատվածներ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան - Հաղթանակ թաղամասին կից նոր կառուցվող թաղամաս, Իսակովի, պողոտայի Տիչինա փողոցի, Լուկաշին, Նոյ, Մուշ թաղամասերի որոշ հատվածներ, Հաղթանակ թաղամասի որոշ փողոցներ,Լուկաշին նոր թաղամաս,Մուշ թաղամասի որոշ փողոցներ

Շենգավիթ վարչական շրջան - Ներքին Չարբախ, Նորագավիթ «Նոր հողեր» կոչվող հատված, Իսակովի պողոտային հարակից հատված, Նոր Խարբերդ այգեգործական տարածք, Արին Բերդի որոշ հատվածներ, Օդեսայի փողոց,Ներքին Շենգավիթի որոշ փողոցներ,Օդանավակայան 50 փողոց

Նոր-Նորք վարչական շրջան-Մոլդովական փողոց «Տորք Անգեղի» արձանի հարակից հատված, Մինսկի փողոց, Գալշոյան և Մինսկի փողոցների միջնամաս, Նոր-Նորք 9-րդ զանգված այգեգործական թաղամաս, Գյուրջյան փողոցին հարակից հատված, Նոր-Նորք 2 զանգված՝ Մոլդովական և Բագրևանդ փողոցներին հարակից տարածքներ,Նոր-Նորք 8 զանգվածի որոշ հատվածներ,Դավիթ Բեկի փողոցի հարակից տարածքներ

Նոր-Մարաշ վարչական շրջան-Նորքի 17 փողոցի վերջնամաս

2. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

գ. Ապարան - Սիրեկան, Կանայան, Ս.Զալալյան, Գայի փողոց 2 փակուղի, Արսեն Տեր պողոսյան , Մ Բասեյան , Գուրգեն Սահակյան, Թումանյան, Տեր տաճատի, Ե. Տոնոյան, Զորավար Անդրանիկ, Նանսեն փողոցները

գ. Աշտարակ - Մ.Մաշտոցի փողոց, Հ.Շիրազի փողոց, Զ.Սմբատի փողոց, Թորոմոնյան փողոց, Ս.Շահազիս և Ե.Շահազիս փողոցներ, Նժդեհի փողոցի որոշ հատվածներ, Հենրիկ Թումանյան փողոց, Պռոշյան փողոցի սեփական տների հատված՝ 24 շենքից մինչև Գր.Նարեկացի փողոց, Գետափնյա փողոց, Լինչի փողոցի սկզբնամաս, Ուլատիտիկ թաղամաս, Սաժումյան, Մայիսյան փողոցներ, Տանձանոց, թաղամաս,Վանի հերոսների փողոց

գ. Թալին - Շիրակացի, Պռոշյան, Այգեստան, Սարատակ, Շիրազի, Ժ.Ավետիսյան, Գ.Նարեկացի, Բաղրամյան, Պ.Սևակի, Ռ.Լևոնյան, Զորափնյա փողոցները, Թումանյան փողոցի վերջին հատվածը

3. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

գ. Արտաշատ - Բուդաղյան փողոց, Սահյան փողոց, Մ.Ավետիսյան փողոց, Դեմիրճյան փողոց, Հ.Մաթևոսյան փողոց

գ. Մասիս -1-ից մինչև 7-րդ թաղամասեր, Նոր թաղ 1-ին և 2-րդ փողոցներ, Բաղրամյան թաղամաս, Կայարան թաղամաս,Մասիս-Ռանչպար կոչվող հողեր:

գ. Վեդի - Սարիբեկ Վարդանյան, Անդրանիկ Օզանյան, Գևորգ Չաուշ, Նելսոն Ստեփանյան, Սողոմոն Թեհլերյան, Բաղրամյան փողոցներ

4. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

գ. Արմավիր-108,109,110 թաղամասեր,Այգեգործական թաղամաս

գ. Մեծամոր-սեփական տների հատված

գ. Էջմիածին- Չարենցի թաղամաս, ԳԿՏ հողամասեր, Զվարթնոց թաղամասի սեփական տների հատված, Պետ-տնկարան կոչվող հողեր, Ա.Մանուկյան թաղամասի որոշ փողոցներ

5. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

գ.Սևան-Արա Գեղեցիկի փողոց,Գոմաձոր և Ցամաքաբերդ թաղամասեր

գ. Գավառ - Սայադյան փողոցին հարակից հատված, Միքայելյան փողոց, Գավառագետի երկայնքով ձգվող հատված, Հացառատ և Արծվաքար թաղամասեր

գ. Մարտունի - Երևանյան փողոց 2 նրբանցք, Կամոյի փողոց 2 նրբանցք, Երիտասարդական փողոց, Արցախի փողոցի որոշ հատվածներ, Մյասնիկյան փողոց 9-րդ նրբանցք

գ. Վարդենիս - Բանդեր և Փողլսու թաղամասեր

6. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ք.Աբովյան - 5,7,8 միկրոշրջաններ, Հատիս թաղամասի որոշ հատված

ք. Չարենցավան - Ջնդլներ թաղամաս ,Գործարանային հատված

ք. Ծաղկաձոր - Պահլավունյաց փողոց, Սարալանջի փողոցի որոշ հատված, Մեր Մկրտչյան փողոց

ք. Եղվարդ-Արա Գեղեցիկ 1,2,3 նրբանցքներ, Մովսես Եղվարդեցի 1-6 նրբանցքներ, Շիրազի թաղամաս 1-13 փողոցներ, Գ.Նժդեհի մի քանի փողոցներ, Իսահակյան փողոց

հ. Նոր Գեղի - Վազգեն Սարգսյան,Շուշի,Արցախ, Մեր Մկրտչյան, Երկրապահներ, Արամ Խաչատրյան, Թումանյան, Իսահակյան, Ազատամարտիկների փողոցներ

Արգել ամառանոցային թաղամաս

հ. Նոր Արտամետ-Նոր Արտամետ համայնքի հիմնական մասը/Հին Գյուղը կոյուղացված է, մյուս տարածքները՝ ոչ/

7 ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ք. Ստեփանավան - Կոմիտասի փողոց

ք. Ալավերդի - Սանահին կայարան թաղամաս

ք. Թումանյան- 2-րդ մասից-մինչև 15-րդ փողոցի մասնավոր տները

ք. Սպիտակ- Այգեստան 1, 2-ի մի հատված, Քրքորյան մի հատված

ք. Ախթալա - Սվինեց թաղամաս, Սայաթ-Նովա, Ռաֆֆի փողոցներ,Լեռնագործների փողոց, Առափնյա, Երկաթուղային փողոցներ

8. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ք. Արթիկ - Պարույր Սևակ, Գրիգոր Զոհրապ, Գրիգոր Նարեկացու, Ալիխանյան, Դավիթ Անհաղթ, Դեմիրճյան և Ստեփան Զորյան փողոցները: Թումանյան փողոց, 1-ին նրբանցք, Տուֆագործների փողոց, 1-ին նրբանցք

ք. Մարալիկ - Հրանտ Շահինյան, Մաշտոցի փողոց, Նոր թաղ փողոց, Կոլտնտեսականների փողոց

ք. Գյումրի - ք. Գյումրի Բաղրամյան, Սևերսկի թաղամաս, Աբովյան փողոցի նրբանցքներ, Ջիվանու փողոցի նրբանցքներ, Սավոյան փողոցից դեպի Անի թաղամաս, Մ. Խորենացի փողոցի վերջնամաս, Հ. Ավետիսյան փողոցի, Խր. Հայրիկ փողոց նախկին հեծանիվի գործարանի տարածք վերջնամաս, Հին Օդանավակայանի տարածք

9. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ք. Կապան - Լենինքեր, Կավարտ, Աշոտավան, Արփիկ թաղամասեր, Ռաֆայել Մինասյան փողոցի որոշ հատվածներ, Ազատամարտիկներ փողոցի որոշ

հատվածներ, Բեղ թաղամաս, Նորաշենիկ խճուղի, Երկաթուղայինների 3,4,5-րդ նրբանցքներ, Սյունիք համայնքի որոշ հատվածներ

<u>ք. Գորիս</u> -Այգեստան փողոց, Արտաշիսյան փողոցի որոշ հատվածներ,Գյուղի փողոց

<u>10. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ</u>

<u>ք.Բերդ -</u> Ադամյան, Ալիխանյան, Այգեստան, Խաչատրյան, Իսահակյան, Նարեկացի, Մանուկյան, Գետափնյա փողոց, Դ. Անհաղթ, Զ. Անդրանիկ, Սահյան, Թեհլերյան փողոցի որոշ հատված, Լևոն Բեկ, Խաղաղության, Աբովյան փողոցի որոշ հատված, Եղիշե Չարենց, Գ.Նժդեհ որոշ հատված, Կոմիտաս փողոց որոշ հատված, Հնաբերդ, Թումանյան, Նահապետ, Շիրազ փողոցի մի հատված, Խորենացի, Մաշտոց, Նորավան, Ուտիք, Ռ. Մելիքյան, Սայաթ-Նովա, Վարդանանց, Տերյան, Տավուշ, Քարաշեն, Բաղրամյան, Նալբանդյան, Ստեփանյան, Պ. Սևակ, Սասունցի-Դավիթ, Սարալանջ փողոցները

<u>ք. Նոյեմբերյան -</u> Այգեգործների, Անտառագործների, Նալբանդյան, Հաղթանակ, Բաբաջանյան, Օրբելի, Ավ. Իսահակյան, Սուվորովի, Սարահարթի, Նորածեն, Կալինինի, Պ. Սևակի, Ռուսթավելի, Մյասնիկյան, քուչակի, Նար-Դոսի, Մ. Սարյանի, Դարփնի, Գայի, Վարար Աղբյուր հանդամաս, Կարմիր Բանակի, Եռվի Հանդամաս, Գյուղ հանդ, Հին ժամ փողոցները

<u>ք. Այրում -</u> Բաղրամյան փողոց, Զոր. Անդրանիկի փողոցի մի քանի տներ

<u>ք.Դիլիջան</u>-Կամոյի փողոց,Սարի թաղ,Սարալանջի փողոց,Տիգրան Պետրոսյան փողոց,Թբիլիսյան խճուղի,Սայաթ-Նովա և Իսակովի փողոցների որոշ հատվածներ,Կալինինի 4-րդ նրբանցք

<u>ք. Իջևան -</u> Մետաղագործներ, Տերյան, Նար-Դոս փողոցների որոշ հատվածներ

<u>11. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ</u>

<u>ք. Եղեգնաձոր</u>-Նորավան, Սյունիքի, Այգեձոր, Պոռշյան, Վ.Համբարձումյան, Հյուսիս Արևմտյան, Հյուսիս Արևելյան հատվածներ, Ազարակաձորի խճուղի, փախստականների թաղամաս

<u>ք. Վայք</u> - Շինարարների փողոց, Ջերմուկի խճուղի 1-ին և 2-րդ նրբանցքներ, Արշավիր Մելիքյան, Վիկտոր Համբարձումյան և Կամոյի փողոցներ